

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՅ ՀԱՒԱՏՔԸ

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

(Շար. Բազմ., 1953, թիւ 11-12, էջ 233)

Նախորդ յօդուածով ջանացինք վեր հանել Ն. Եպս. Ծովականի ուսումնասիրութեան բացասական մասը, ծանրանալով Ս. Ներսէս Շնորհալիի այն բացատրութիւններուն վրայ՝ զոր բոլորովին անտեսեւ էր. այդպէսով նկատեցինք առարկայականութեան հիմնական պակաս մը: Ներկայիս, նոյն ուղղութեամբ շարունակելով, կ'ուզենք դրական մասին անցնիլ. այսինքն՝ քննել նաեւ այն վկայութիւնները, զոր յիշատակած է Գերշ. յօդուածագիրը, տեսնելու համար թէ ո՞րքան առարկայականութիւն կայ անոնց մեկնաբանութեան մէջ:

Բայց նախ քան այդ, հարկ է ծանրանալ Ս. Հայրերու երկերը մեկնելու մէկ կարեւոր սկզբունքին վրայ. այն է՝ թէ ի՞նչ լոյսի տակ քննելու ենք հայրախօսական կարգ մը մութ եւ տարտամ ու նոյնիսկ հակասական կարծեալ բացատրութիւններ, չչեղելու համար ողջամիտ քննադատութեան թելադրած շաւիղէն: Ընդհանուր սկզբունքը այն է, որ հարկ է հեղինակի մը մութ կամ դժուարահասկնալի տողերը մեկնել նոյն հեղինակէն քաղուած նոյն նիւթին շուրջ խօսող յստակ հատուածներու լոյսին տակ, եւ դասաւորել բոլորը ընդհանուր համադրութեան մը մէջ: Այս սկզբունքին դէմ կը մեղանչենք, եթէ յստակ բացատրութիւնները անտեսած՝ ենթադրեալ միջին հատուածներուն մէջէն որսանք մեր կանխակալ կարծիքին մօտեցող դադափարներ ու մնացածը ծածկենք. այսպէս է, դժբախտաբար, Ն. Եպս.

Ծովականի պարագան, ինչպէս պիտի տեսնենք:

Օրինակներով բացատրենք. ենթադրենք թէ Ս. Ներսէս Շնորհալիի հաւատքի վէմ կը կոչէ մերթ Պետրոս Առաքեալը, մերթ Պետրոսի դաւանութիւնը: Կանխակալ կարծիքով մեկնած վ'ըլլանք՝ եթէ դաւանութեան միայն նախնորութիւն տանք եւ Պետրոսը անտեսենք. նմանապէս, եթէ միայն Պետրոսի վրայ ծանրանանք, եւ դաւանութիւնը չնկատենք: Հարկաւոր է քննել՝ թէ ի՞նչ իմաստներով երկուքն ալ կիրարկուած են ու զիրար կ'ամբողջացնեն:

Կամ ենթադրենք թէ Շնորհալիին տեղ մը Պետրոս Առաքեալը կ'անուանէ գերագոյն եւ գլուխ, ուրիշ տեղ մը՝ հաւասար միւս առաքեալներուն. (ըսի՝ ենթադրենք, վասնզի երբեք հաւասար չի կոչեր յայտնապէս): Կանխակալ կարծիքով մեկնած վ'ըլլանք, եթէ առանց կշռելու՝ խսկոյն հաւասարութեան առաւելութիւն տանք, իսկ գլխաւորութիւնը անտեսենք. նմանապէս, եթէ միայն գլխաւորութիւնը դրուատենք ու հաւասարութիւնը չքացնենք: Հարկ է երկու բացատրութիւններուն ալ հարադատ իմաստը ցուցադրել. անկարելի չէ որ բոլոր առաքեալներն ալ հաւասար ըլլան իբր օծեալ քահանաներ, իբր մատակարարներ սուրբ խորհուրդներու, իբր քարոզութեամբ եւ հրաչքներով Քրիստոսի զործը շարունակողներ, մէկ խօսքով՝ Քրիստոսի յաջորդներ. բայց անկարելի չէ որ միաժամանակ նաեւ անհաւասար ըլլան՝ իրա-

ւասական ու վարչական տեսակէտով, ու այս կարգին մէջ մէկ հոգի միայն ըլլայ Քրիստոսի փոխանորդը:

Ասոնք ենթադրութիւններ են. հարկ է քննել թէ Ս. Ն. Շնորհալի ի՞նչ մտքով կը մօտենայ այս հարցերուն: Շարունակելով մեր ծրարքին վրայէն, այս անգամ ալ նիւթը կ'ամփոփենք փոքրիկ գլխակարգութիւններու տակ:

Դ. — ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ

Ս. Աւետարանի հետքերէն քալելով, զիտենք թէ Յիսուսի չարչարանքներու ժամանակ՝ Պետրոս Առաքեալ երբ անգամ ուրացաւ իր Վարդապետը, երգումով վրկայեց թէ ինք Քրիստոսի հետեւորդ չէ եւ թէ չի ճանչնար զանիկա: Բայց իսկոյն, երկրորդ հաւախօսին, յիշեց իր սիրելի Վարդապետին մարգարէական խօսքերը, ու զղջումի դառն արցունքներով սկսաւ լալ: Այնուհետեւ Պետրոս միացաւ իր ընկերներուն. յարութեան առաւօտը դարձեալ առաքեալներուն հետ էր, եւ անկէ վերջ՝ միշտ. ու օր մը, Տիբերական ծովակի ափին, հրաչափօր ձկնորսութենէն վերջ, Յիսուսի երբեակ հարցումներուն վերջ, Յիսուսի երբեակ հարցումներով (սիրե՞ս զիս)՝ դրական պատասխանելով (սիրեմ գեղ), արժանացաւ Յիսուսի երբեակ պատգամներուն (արածես'...):

Ըստ Ս. Հայրերու եւ կաթողիկէ մեկնիչներու, Քրիստոսի խոստումը առ Պետրոս Առաքեալ (թէ Պետրոս-վէմին վրայ պիտի շինէր իր Եկեղեցին եւ Պետրոսի պատի յանձնէր երկնքի արքայութեան բառի յանձնէր, այսինքն՝ եկեղեցական զերանալիները, այսինքն՝ կ'իրադրօնէր զոյն իշխանութիւնը), կ'իրադրօնէր Յիսուսի այդ երեք պատգամներով, որով Յիսուսի միայն կը կարգուէր տեսանելի եւ Պետրոս միայն կը կարգուէր տեսանելի երկրաւոր եկեղեցւոյ զերանոյն հովուապետ: Ուրացութիւնը, զոր արդէն իսկ քաւած էր յորդ արցունքներով, կը ծածկուէր զիշխանութիւն մէջ. իսկ սիրոյ եր-

բեակ հարցումները, որ անշուշտ խորհրդաւոր կապ մը ունին երբեակ ուրացումին հետ, նախապատրաստական տարրը կը կազմեն հովուապետութեան յանձնումին. զերանոյն հովուապետը՝ Պետրոս, պէտք էր զերանոյն սիրով միացած ըլլար Յիսուսի՝ ճշմարիտ եւ քաջ հովիւին հետ:

Իսկ կարգ մը նորադանդ մեկնիչներ, Աւետարանական յիշեալ դէպքերուն մէջէն չափ կը ծանրանան ուրացութեան եւ անոր հետեւանքներուն վրայ: Ասոնց համաձայն, Պետրոս Առաքեալ, Տիբերական ծովակի ափին, սիրոյ երբեակ ներգործութիւններով կը քաւէ իր ուրացութեան մեծ մեղքը, եւ Յիսուսի երբեակ պատգամներով կը վերահաստատուի իր առաքելական պաշտօնին մէջ, որմէ իբր թէ ինկած էր: Զկայ զերանոյն հովուապետութեան յանձնում. առաքեալները ամէնքն ալ հաւասար են. հաւասարապէս Ս. Հոգին կ'ընդունին եւ քարոզութեան կը զրկուին:

Ն. Եպս. Ծովականի համաձայն՝ Ս. Ներսէս Շնորհալիին ալ իբր թէ այս վերջին իմաստով կը մեկնէ Ս. Աւետարանը: Ահա՛ յիշած վկայութիւնները.

- 1 - «Ի յաղջկանէ շարժեալ վիմին թողոյր երիցս ըզրադապին»(1):
- 2 - «Որ դառնապէս արտասուելովն՝ ընկալաւ ի քէն, երիւք հարցմամբ սիրոյն, գերից ուրացութեանցն զբժըկութիւն»(2):
- 3 - «Որ երբակի սիրով Բանին Հարցանելով քո յետ քաշին, Զուրացութիւնըն գերեսին Բժըկեցեք ըզՊետրոսին»(3):

(1) Բանի չափաւ, Վենետիկ - Ս. Ղազար, 1830, էջ 205:

(2) Շարակնոց, Վենետիկ - Ս. Ղազար, 1898, էջ 436:

(3) Բանի չափաւ, էջ 132:

Ասոնց վրայ կրնար աւելցնել.

4 — «Պետրոս երից հարցանելով
Զուրացուք ինքնին քաւելով»(4):

Նախ իսկոյն անդրադարձնենք որ վերո-
յիշեալ վկայութիւններէն երկրորդը առ-
նուած է Աւագ Ուրբաթու շարականէն. եւ
հարկ է նշել որ առաջ պատշաճի շարա-
կանի մը մէջ չէ կարելի վարդապետական
տեսաբանութիւն մը ամբողջապէս ամփո-
փել, այլ՝ նիւթին եւ տօնին յարմար մաս
մը նախընտրել սովորութիւն է. արդ, շատ
պատշաճ էր որ Շնորհալին, Աւագ Ուրբա-
թու լացի գիշերուան համար՝ ցաւ, զրդ-
ջում ու սէր արծարծող դրուագներ յիշա-
տակէր. Պետրոսի ուրացութիւնն ու զրդ-
ջումը նպատակաւարմար էին ատոր: Պա-
րագան քիչ շատ նոյն է նաեւ վերոյիշեալ
միւս հատուածներուն համար: Կարելի՞ էր
Յիսուսի չարչարանքներու խորհրդածու-
թիւններուն մէջ Պետրոսի գլխաւորութեան
վրայ ճառել. այդ մասը արդէն լայնօրէն
կատարեր էր Շնորհալին ուրիշ հատուած-
ներու մէջ, զորս կը սիրէ անտեսել Սա-
ղէմեան յօդուածագիրը:

Երկրորդ, աւելցնենք որ Պետրոսի ու-
րացութիւնն ալ, Ս. Ներսէս Շնորհալիի
համաձայն, այնքան ծանր եւ անդնդային
մեղք մը նկատուել չէ, եւ ոչ ալ՝ յօդուա-
ծագիրին բառերով՝ « չափազանց ծանրա-
կշիռ յանցանք » մը, որու աղջամուղջին
մէջ իբր թէ Պետրոս Առաքեալ օրերով մը-
նացած ըլլայ: Ահա՛ Շնորհալիի վկայու-
թիւնները, մոռցուած ու անտեսուած
Գերշ. յօդուածագիրէն.

1 — «Որ ոչ քողեր հոսել վիմին
ի խոր մեղաց անդնդային,
Այլ դառնապէս լալով սրտին՝
Քաւիչ եղեր ուրացողին»(5):

2 — «Շնորհեալ վիմին եկեղեցւոյ
Զոր պահեցեր ի հոսելոյ,
Եւ կանգնեցեր ի գլորելոյ
Վասն սրտին արտասուելոյ»(6):

3 — «Նըշանակեալ հաւրն խօսէր,
Առ ի Պետրոս Տէրն ակնարկէր
Զբանքն յիշեալ՝ դառն արտասուէր
Ի գլորմանէն դարձեալ կանգնէր»(7):

Արդ, ջանալով այս վկայութիւնները
համադրել նախորդներուն հետ, կ'եզրա-
կացնենք որ Շնորհալիի մտքին համա-
ձայն՝ Պետրոսի ծածուկ քաւութիւնը, յա-
րութենէն վերջ, հրապարակային բժշկու-
թեան հանդամանք մը կ'առնէ՝ սիրոյ եր-
բեակ հարցումներով:

Երրորդ նկատելի ամէնէն էական կէտը
այն է, որ Շնորհալին Պետրոսի հրապա-
րակային բժշկութեան հետ կը կապէ մի-
այն Յիսուսի երբեակ հարցումները (սի-
րե՞ս գիւ), անշուշտ ներփակելով նաեւ
Պետրոսի երբեակ սիրալիր պատասխանե-
րը (սիրե՞մ գիւ). բայց այդ բժշկութեան
հետ ամենեւին չի կապեր Յիսուսի երեք
պատգամները (արածէ...): Ն. Եպս. Ծո-
վական կը կարծէ որ Պետրոս Առաքեալ
ուրացութեամբ ինկած էր իր առաքելա-
կան պաշտօնէն, ու կը վերահաստատուէր
Յիսուսի երբեակ հրամայական արածե-
ներով: Բայց կը սխալի. Շնորհալին այդ-
պէս չի խորհիր. նախ, ո'չ մէկ վկայու-
թիւն՝ թէ Պետրոս ուրացութեամբ վոր-
սընցուցած էր իր առաքելական պաշտօ-
նը. եւ երկրորդ, ո'չ մէկ փաստ՝ թէ այդ
կորուսեալ պաշտօնին մէջ կը վերահաս-
տատուէր Յիսուսի երբեակ պատգամնե-
րով: Եթէ խորհրդաւոր կապ մը կայ Պե-
տրոսի երբեակ ուրացումին եւ բժշկու-
թեան մէջ, այդ կապը մի միայն Յիսուսի

(6) Շարակնոց, էջ 168:

(7) Բանք չափաւ, էջ 205. եւ Շարակնոց, էջ
168:

(4) Անդ, էջ 218:

(5) Անդ, էջ 120:

երբեակ հարցումներուն (սիրե՞ս գիւ), եւ
Պետրոսի երբեակ պատասխաններուն հետ
է (սիրե՞մ գիւ): Այս է Ս. Ներսէս Շնոր-
հալիի միտքը. աւելին կու գայ Ն. Եպս.
Ծովականի գրիչէն, որ կ'ուզէ Շնորհալիի
բերանը դնել իր անհիմն վարկածները:

Ե. — ՊԵՏՐՈՍ ԵՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Ն. Եպս. Ծովական ցոյց տալու համար՝
թէ Ս. Ն. Շնորհալիի համաձայն Քրիս-
տոսի փոխանորդ են հաւասարապէս բոլոր
առաքեալները, ինչպէս նաեւ անոնց յա-
ջորդները, կը յիշատակէ երկու վկայու-
թիւններ.

1 — «Տալ գիտցին մետասանին
Եւ քն փոխան լինել անցին
Եւ յետ անցա որք ըստ կարգին»(8):

Թիւրիմացութիւն մըն ալ հոս. Շնոր-
հալիի այս հատուածին մէջ ամենեւին
խօսք չկայ վարչական փոխանորդութեան
մասին. խօսքը մի միայն այն հրաշագործ
զօրութեան մասին է, որ հաւասարապէս
տրուեցաւ բոլոր առաքեալներուն: Բնա-
տրական համաձայն, ինչպէս Եղիսէ Եղիայի
մաշկեակն ընդունելով՝ ստացաւ անոր
հոգին եւ հրաշագործ զօրութիւնը, այս-
պէս նաեւ առաքեալները Ս. Հոգիով զօ-
րացած՝ ժառանգեցին Քրիստոսի հրաշա-
գործութիւնը եւ եղան անոր յաջորդները,
այսինքն՝ Քրիստոսի սկսած գործը շարու-
նակողները քարոզութեամբ եւ հրաշագոր-
ծութեամբ: Թող խօսի Շնորհալին.

«Զի որպէս նա վարդապետին
Եղեւ նրման ամենեւին,
Եւ քն ընտրեալքն յաշխարհէ
Ի գործ հրաշից նրմանցին»... (9):

(8) Բանք չափաւ, էջ 50:

(9) Անդ:

Ու մանրամասնութեանց իջնելով, դեռ
կը շարունակէ շուրջ 28 տող, եւ զուգա-
կշիռը կ'ընէ Եղիսէ մարդարէի եւ առա-
քեալներու քարոզութեան եւ հրաշապա-
տում գործերուն: Հետեւաբար այս վկա-
յութիւնը աղերս չունի Պետրոսի գլխաւոր-
ութեան հետ, ոչ ալ անոր հակառակ բան
մը ունի:

Անցնինք երկրորդ վկայութեան.

2 — «Նախ առաքեալքն քն դասին
Յերկոտասան աքոռ նստին.
Զերկոտասան ազգըն դատին
Մեղուցելոյ իսրայէլին»(10):

Ն. Եպս. Ծովական ասկէ կը հետեւցնէ՝
որ առաքեալները հաւասար դատողական
իշխանութիւն ունին, հաւասար են, ըստ
Շնորհալիի: Բայց ինչպէս միշտ, հոս ալ
կը մոռնայ աչք մը տալ բնագրին նախորդ
եւ հետեւորդ տողերուն, ուր խօսքը վեր-
ջին դատաստանին եւ աշխարհի կատարա-
ծին վրայ է. կը վկայէ ինք Շնորհալին.

«Իսկ քաղաւորք ի մեծ քեմին
Նըստիս յաքոռ դատարանին,
Զի Հայր չդատէ գոք երկրածին
Այլ քեզ միայն ետ, Միածին»:

Հովուիդ հանդէպ գան ժողովին
Հօտից նրման ազգ երկրածին.
Օղիքն յաջեայսրդ կարգեցին,
Ուլին ի ճախմէ քումմէ դասին»(11):

Արդ, շատ բնական է որ, ուր Քրիստոս
կը բազմի իբր միակ ու գերագոյն դատա-
ւոր, առաքեալներուն մէջ ալ չըլլայ մեծ
ու փոքր, այլ հաւասար բազմին Քրիս-
տոսի շուրջ: Վերջին դատաստանին՝ եր-
կրաւոր զինուորեալ եկեղեցին պիտի դադ-

(10) Անդ, էջ 152:

(11) Անդ, էջ 147:

րի դոյութիւն ունենալէ. այլեւս հարկաւոր չէ Պետրոսի դիւանորութիւնը, քանի որ Քրիստոս անձամբ պիտի դահակալէ իր փառաւորեալ եկեղեցիին մէջ, ու ամէն իշխանութիւն պիտի յանձնէ երկնաւոր Հօր:

Ուստի, կարծեմ այս երկրորդ վկայութիւնն ալ անտեղի կերպով յիշատակուած է Ն. Եսայ. Ծովականի կողմէ:

Չենք կրնար բացատրել ինչո՞ւ Գերշ. յօդուածագիրը կը ճշնի ոչ միայն անտեսել «Եւ դու Հոռոմ մայր քաղաքաց» հատուածին դաւանական պայծառ իմաստները, այլ նաեւ մթապնել, բոլորովին այլափոխել զանոնք՝ նորանոր վկայութիւններու անտեղի կոտակումով, եւ այդպէս պղտորել բարեմիտ հաւատացեալներու միտքերը:

2. — ՊԵՏՐՈՍԵԱՆ ԳՈՒՆԻՐ

Ս. Ներսէս Շնորհալի ոչ միայն «Եղեսիոյ ողբ»-ին մէջ, այլ նաեւ այլուր Ս. Պետրոս Առաքեալը կը կոչէ աշակերտաց գերագոյն(12), ընտրեալ գլուխ փոքրիկ հօտին(13), իսկ առաքեալները կ'անուանէ Պետրոսեան գունդ(14): Ուրեմն, ըստ Շնորհալիին, Պետրոս Առաքեալ զօրավարի մը հանգամանքն ունի. կառավարիչ մըն է, որ անխորտակելի Ժայռի նման կը փշրէ դժոխքի զօրութիւնները: Զօրավար մը, որ թէեւ ունեցաւ իր անհատական անկումը, սակայն զղջումով ու սիրով աւելի սեւեռութէն փարեցաւ իր աստուածային Վարդապետին կենսատու զօրութեան, ու դարձաւ կեփայեան անշարժական վէմ, կնիք երկնիցն քացոյ(15):

Բնական է այս խորհրդածութիւններն ալ տեղ չունին Ն. Եսայ. Ծ. -ի ուսումնա-

սիրութեան անձուկ էջերուն մէջ. ինք բաւականացած է կողեւով ու բշկտելով Շնորհալիին տողերը, ու դժուած բան մը ներկայացնելով, բոլորովին խեղաթիւրուած եւ այլասերած:

Է. — ՊԵՏՐՈՍԻ ԴԱԻԱՆԱՐԸ

Ն. Եսայ. Ծովական կը կրկնէ նաեւ այն կարծիքը՝ թէ Քրիստոս իր Եկեղեցին հիմնած է ո'չ թէ Պետրոսի վրայ, այլ Պետրոսի դաւանանքին վրայ, այսինքն՝ հաւատքի վրայ: Իբրեւ փաստ՝ կը յիշատակէ Շնորհալիի հետեւեալ խօսքերը.

«Նոյն շինեցեր գեկեղեցի վէմդ ի վերայ վիմին բանի»(16):

Նախ քան մեկնութիւնը, վկայութիւն մըն ալ մենք աւելցնենք, որ անշուշտ ծանօթ ըլլալու է Գերշ. հեղինակին. «Տէրն գղաւնութիւնն Պետրոսի եղ որպէս ըզվէմ՝ հիմն իմանալի եկեղեցոյ իւրում»(17):

Անցնելով բացատրութեան, նախ եւ առաջ կ'անդրադարձնենք որ յիշեալ հատուածներուն մէջ եկեղեցոյ հիմ նկատուած է ո'չ թէ հաւատքը կամ դաւանանքը յինքեան, ինչպէս կ'ուզէ կարծել Ն. Եսայ. Ծ., այլ միշտ Պետրոսի՝ հաւատքը, Պետրոսի՝ դաւանանքը, վէմին խօսքը: Եւ կը խորհինք թէ վերոյիշեալ բացատրութեան հարադատ իմաստը ըմբռնելու համար՝ հարկ է համադրել ու ձուլել Ս. Ն. Շնորհալիի բոլոր ըսածները Պետրոս Առաքեալի մասին, եւ հարցը քննել ընդհանուր համապատկերի մը մէջ. այս նորատակով է որ ամէնէն վերջ թողուցինք այս խնդրին լուսաբանութիւնը:

(16) Ժամագիրք, Վենետիկ - Ս. Ղազար, 1898, էջ 171:

(17) Նամականի, Վենետիկ - Ս. Ղազար, 1838, էջ 52: Ընդհանրական, անդ 1830, էջ 11:

Արդարեւ, ինչպէս տեսանք նախորդ անգամ, Ս. Ներսէս Շնորհալի Պետրոս Առաքեալը կ'անուանէ նաեւ վէմ, վէմ եկեղեցոյ, վէմ հաւատոյ, սուրբ հաւատոյ անշարժ վէմ, կեփայեան վէմ, գլուխ առաքեալներու, փակակալ երկնի(18):

Հետեւաբար, յիշեալ զանազան բացատրութիւնները ձուլելով, պարտական ենք եղրակացնել՝ թէ ըստ Շնորհալիին, հաւատարապէս կարելի է եկեղեցոյ հիմ անուանել թէ՛ Պետրոս Առաքեալը եւ թէ՛ Պետրոս Առաքեալի դաւանանքը. առաջինը հակառակ չէ երկրորդին, եւ ոչ ա՛յ երկրորդը՝ առաջինին, այլ միեւնոյն ճշմարտութեան երկու տարբերն են որ զիրար կ'ամբողջացնեն. ու մենք այս երկուքը համադրելով կրնանք ըսել՝ թէ, ըստ Շնորհալիին, Պետրոս Առաքեալ հիմ է եկեղեցոյ հանդերձ իր դաւանութեամբ: Ո'չ հաւատոյ դաւանութիւնը կարելի է բաժնել Պետրոսէն, եւ ոչ ալ Պետրոսը կարելի է բոլորովին անջատել իր հաւատոյ դաւանանքէն, եկեղեցոյ հիմին վրայ խօսելու միջոց. բայց կարելի է մերթ մէկ, մերթ միւս կէտին վրայ ծանրանալ, ըստ պարագային, առանց սակայն Ժխտելու աւոր երկրորդ տարրը:

Ի՞նչ է Պետրոսի դաւանանքին բուն նշանակութիւնը: Ս. Աւետարանին մէջ Պետրոս Առաքեալ հանդիսապէս դաւանած է Քրիստոսի աստուածութիւնը. բայց ասիկա չի բաւեր հաւատացեալներուն՝ Պետրոսի հաւատքը լրիւ ունենալու համար. այո՛, քրիստոնէական կեանքի ու դաւանածութեան հաւատալը, սակայն կան հաւատքի ամբողջութիւնը կազմող ուրիշ մասեր եւս, (օր. Ս. Երրորդութիւն, Մարդեղութիւն, Եկեղեցի, Պորհուրդներ,

Հանդերձեալ կեանք եւն...), որոնք բոլոր, ըստ Շնորհալիին, զօրութեանապէս կ'ամփոփուին Պետրոսի դաւանանքին մէջ, եւ որոնց բոլորին չափանիշն է Պետրոսի դաւանանքը: Զէ՞ որ Շնորհալիին ինք ալ իր ընդարձակ հաւատոյ դաւանանքը խոնարհաբար ենթարկեց Պետրոսի դատաւանին, ինչպէս տեսանք(19): Ուրեմն, ըստ Շնորհալիին, Պետրոսի դաւանանքը պարտադրական բան մըն ալ է, եւ ոչ թէ հաւատացեալներու քմահաճ մեկնաբանութեան թողուած բան մը. ասկէ կ'եղրակացնենք՝ թէ Պետրոս Առաքեալ ո'չ միայն զլուս է եւ պետ Ս. Եկեղեցոյ, այլ եւ հաւատքի անսխալ ուսուցիչ ու հեղինակաւոր վարդապետ: Ուստի երբ կ'ըսենք՝ թէ եկեղեցին հիմնուած է Պետրոսի դաւանութեան վրայ, կը հասկնանք՝ միշտ Պետրոսի վրայ իբրեւ դաւանողի եւ դերաւորի վարդապետի: Ուր չկայ, ուրեմն, Պետրոսի լրիւ հաւատքը՝ հոն չկայ նաեւ ճշմարիտ եկեղեցի:

Անդրադոյն լուսաբանութիւնը թէ ի՞նչ իմաստով Պետրոս վէմ է, կամ ի՞նչ իմաստով Պետրոսի դաւանանքը վէմ է Եկեղեցոյ, հարկ է որոնել եկեղեցական պատմութեան առաջին դարերուն մէջ, ուր միայն կարելի է ստուգել այս զանազանութեան հարադատ իմաստը:

«Երկու մեկնութիւններն ալ, կը գրէ պատմագէտ մը, ուղղափառ են, թէ այն որ կը մեկնէ՝ Պետրոսի դաւանանքին վրայ, եւ թէ այն որ կը մեկնէ՝ Պետրոսի անձին վրայ: Սակայն կայ տարբերութիւն մը, այնու որ՝ այս վերջինս է ուղղակի, նախնական ու տեւական իմաստը. մինչ առաջինը՝ անուղղակի եւ վերահաս իմաստն է, ծագած չորրորդ դարու աստուածաբանական վէճերու առիթով: Ար-

(12) Անդ, էջ 135:

(13) Շարակնոց, էջ 164:

(14) Բանի չափաւ, էջ 389, 396:

(15) Հմմտ. Ողբ Եղիսեայ, Փարիզ, 1827, էջ 3:

(18) Տ'ես Բազմավեպ, ձԺԱ. [1953], Թ. 11-12, էջ 238, ծնթ. 13, 15, 16: Աստ, ծնթ. 12, 15: Հմմտ. նաեւ Հիմնական տարբերութիւն կաթողիկէ

եւ էջմիածնական դաւանութեանց (Հ. Յովսէփ Վրդ. Գաթրճեանի), Կ. Պոլիս, 1864, էջ 393:

(19) Բազմավեպ, անդ, էջ 237-238:

